ՕԾՎԵՑ ԳՈՐԻՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբերի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը մեկնեց Սյունյաց թեմ նախագահելու առաջնորդանիստ Գորիս քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման արարողությանը:

30-ական թվականներին փակված եկեղեցին հիմնովին վերանորոգվել է այս տարվա ընթացքում:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Արգենտինայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Մուրադյանը, Գևորգյան հոգևոր ճեմարանի աստվածաբանության դասախոս Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը, միաբան վարդապետներ և սարկավագներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Գորիսի մուտքի մոտ Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Սյունյաց թեմի թեմական առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Սյունիքի մարզպետ գեներալ Սուրեն Աբրահամյանը, քաղաքապետ Սուրեն Խաչատրյանը և քաղաքային իշխանությունների այլ ներկայացուցիչներ: Ավանդական աղ ու հացի մատուցումից հետո ավտոշարասյունը առաջնորդվեց դեպի եկեղեցի: Պատարագիչն էր Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Նախ Վեհափառ Հայրապետը օծեց Սուրբ Սեղանը, ապա Սրբազան Հայրերի կողմից օծվեցին նաև եկեղեցու 12 սյուները :

«Այս եկեղեցու օծումը սոսկ քարերի օծում չէ. սա ժողովրդի՛ օծումն է աստվածային ջնորհով: Եկեղեցին կյա՛նք է և ոչ թե շենք ու հուշարձան: Դո՛ւք եք եկեղեցին: Ձեր մասնակցությու՛նն է եկեղեցու կյանքին, որ իմաստ պիտի տա այս եկեղեցու վերակառուցմանն ու օծմանը: Հոգևոր վերանորոգության շունչն է սա, որ այստեղ՝ Գորիսում արտահայտվում է, ինչպես ողջ Հայաստանում, Արցախում և այլ տարածքներում: Թող այդ շունչը զորացնի և պայծառակերպի ձեր բոլորի կյանքերը», - օծման արարողությունից հետո ժողովրդին իր պատգամը փոխանցեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն ի մասնավորի ասաց.

«Գերաշնորհ առաջնորդ Սյունյաց թեմի, հարգարժան մարզպետ Սյունյաց աշխարհի, մեծարգո քաղաքապետ Գորիս քաղաքի և սիրելի հոգևոր եղբայրներ և ամենասիրելի հավատացյալ ժողովուրդ Աստուծո Գորիս քաղաքի.

Ես չգիտեմ, թե դուք արդյոք զգո՞ւմ եք այն, ինչ ես զգում եմ այս պահին: Մի պատմական օր է, որ մենք այսօր անցկացնում ենք այս տարածաշրջանի մեր հայկական հարազատ հողի վրա այսօր, այս պահին մեր հոգեկան հաղորդակցությամբ Աստուծո հետ: Աստված այցելում է մեզ: Սուրբ Մյուռոնը, որ Սուրբ Հոգու խորհրդանիշն է, այսօր հպվեց այս քարերին, և այս քարերը դադարեցին նյութ լինելուց: Համբուրելի քարեր են, ոչ թե լոկ քարեր, որովհետև Սուրբ Հոգով են այցելված: Սուրբ Մյուռոնով դրոշմված քարեր են, հոգեցյալ քարեր են, որոնք կխոսեն մեզ, եթե հոգևոր ականջ ունենք լսելու, կարևորն այն է, որ այսօր այս եկեղեցու օծումով մեր ժողովուրդը, դուք՝ հավատացյալներդ, փոխվեք, կերպարանափոխվեք: Քրիստոնեական հավատքը չդառնա ձեզ համար ձեր հայրերի, անցյալի փառքը, այլ Ավետարանը, մեր եկեղեցու արարողությունները, մեր եկեղեցու հարազատ ավանդությունները դառնան ձեր ամենօրյա կյանքի մասն ու բաժինը: Եկեղեցին անցյալին չի պատկանում, եկեղեցին հավերժական է, ճիշտ է, որ եկավ մի իշխանություն, մի բռնակալ

վարչակարգ, մի անաստվածյան վարդապետություն, ուզեց քանդել հավատքը, ջնջել դրոշմը, բայց չհաջողվեց և չեն հաջողի նրանք, ովքեր պայքարում են Աստուծո դեմ: Ինչպե՞ս կարող է արարվածը, ստեղծվածը իր ստեղծողի դեմ պայքարել:

Խորտակվեցին բոլոր անաստվածները, բոլոր անհավատները: Հավատքը եթե հանենք հայության կյանքից, ի՞նչ կմնա, ինչո՞վ կարող ենք հայ մնալ: Եթե մի օտար ձեզ հարցնի, որ տաք իրեն ձեր ազգի մեծերի անունները, ապա պետք է տաք Գրիգոր Լուսավորչի, Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Գրիգոր Նարեկացու, այսինքն՝ նրանց, ովքեր Քրիստոսի հավատքը ապրեցին, իրենք ապրեցին և մեր մեջ ապրեցին: Եվ այսօր մեր հանրապետության ազատ և անկախ ժամանակաշրջանին, երբ ազատություն ենք վայելում, արժեցնենք այդ ազատությունը մեր կյանքով, պարկեշտ քրիստոնյա հայ քաղաքացու կյանքով: Այս է, որ մեր երկիրը պետք է չենացնի, և ոչ դրամը կամ նախագահի հրահանգը: Մեր ժողովուրդն է այս հողի թե՛ տերը և թե՛ ծառան: Եթե ուզում եք, որ տերը լինեք այս հողի, եղեք ծառան: Հիսուս եկավ, մարդկանց ոտքերը լվաց, ծառայեց: Մենք մեր պատմությունը հայրենասիրական, եկեղեցասիրական, մշակութասիրական նվիրման մեջ պետք է տեսնենք: Այս է ուժը, որ հողը Հայրենիքի կվերածի, քարը՝ եկեղեցու կվերածի: Այսօր ես ողջունում եմ ձեզ՝ ողջ հավատացյալներիդ:

Շնորհավորում եմ թեմի բոլոր անդամներին, մարզպետին, Գորիսի քաղաքագլխին: Այսօր հակառակ ձյունի, հակառակ սառցապատված ճանապարհների, ես եկա՝ ասելու համար մեկ բան. ես ժողովրդի ծառան եմ և երբ ժողովուրդը մի այսպիսի օր է ապրում, մի վերացման պահ է ապրում, ես չէի կարող բացակայել, դա ինձ համար խղճի խայթ կլիներ: Սուրբ Էջմիածնի օրհնությունները բոլորիդ: Ցանկանում եմ, որ այս եկեղեցին դառնա ձեր տունը: Այս եկեղեցին քարը չէ, ջահը չէ, այս եկեղեցին դուք եք: Կիրակի օրերը պետք է գաք, լցնեք այս եկեղեցին, խաչ հանեք: Թո՛ղ 70 տարիների վատ սովորությունները, 1700 տարիներ խաչ ենք հանել, ինչո՞ւ մոռանանք 1700 տարիները և ապրենք 70 տարիների պարտադրյալ կյանքով: Ժողովուրդը իր կյանքով պետք է արժեցնի եկեղեցին, այլապես այս քարը քար է, առանց ձեր ներկայության: Պետրոս առաքյալը հիանալի խոսքեր ունի. «Դուք եք կենդանի քարերը Աստուծո տաճարի»: Ես օրհնում եմ այսօր բոլորիդ և ասում, որ այս օրը, 1997-ի դեկտեմբերի 20-ը, արձանագրվի ձեր բոլորի հոգիներում, մանավանդ նոր սերնդի, ձեր երեխաների, որ հետագայում իրենց զավակներին պատմեն, որ մի այսպիսի բան պատահեց և իրենց կյանքը փոխվեց, դարձանք դեպի լույս, դեպի Աստված և դարձանք դեպի հայրենասիրություն, պատասխանատվություն մեր Աստուծո փառքի համար, հավիտյանս հավիտենից. ամեն:»

Ապա Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, մարզպետ Ս. Աբրահամյանը, քաղաքապետ Ս. Խաչատրյանը շնորհակալանքի և երախտագիտության խոսք ասացին Վեհափառ Հայրապետի ներկայության համար՝ հակառակ ձմեռային ցուցախառն եղանակին:

Նույն օրը նորաշեն եկեղեցում կատարվեցին բազմաթիվ պսակներ և մկրտության արարողություններ, իսկ նորապսակ զույգերից ոմանք և մկրտյալ երեխաները ստացան նաև Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ